

ջրաթափ անցքի վրայի ցանցը: Մաքրելով վերջինս, մեքենան շրջեցնել և ստուգեցնել պոմպի փականվի ամրացման հուսալիությունը: Եթե թուլացել է փականվի վրայի կառանիչ պտուտակը, ձգեցնել այն: Ստուգեցնել (նալած մեքենայի տիպին), արդյոք շփվում են պոմպի և շարժիչի փականիվները, չի՞ թուլացել արդյոք պոմպի փոկը: Անմիջապես վերացրեք նկատված թերությունը:


Հիշեցնե՛ք. որն է անսարքիություն վերացնելուց առաջ մեքենան պետք է անջատել էլեկտրացանցից:

Վերջացնելով լվացքը, թափեցե՛ք լուծույթը, և մեքենայի իրանը, բաքն ու ցենտրիֆուգը (եթե այդպիսին կա) անպայման լվացե՛ք ջրով և լաթով չորացրե՛ք:

Որքան հաճախ ուշադրություն դարձնե՛ք ձեր մեքենայի «քմահաճույքներին» և դրանց պատճառները վերացնե՛ք, այնքան հուսալիորեն այն կաշխատի, ձեզ ապատելով այնպիսի տոհմ վրա՛մունքից, ինչպիսին է լվացքը տատիկի մեթոդով՝ տաշտակի վրա կռացած լվանալը:

ԳՐԻԻ ԱՎՏՈՄԱՏ ՏՊԱՐԱՆԸ 1975 ԹՎԱԿԱՆԻՆ

Գերմանական մի ամսագիր տպագրել է հոդված, որի հեղինակն իր ենթադրություններն է բերում ավտոմատ-տպարանի մասին: Ապագայի տպարանի ուղեղը պետք է լինի բարդ էլեկտրոնային-հաշվիչ մեքենան: Սկզբում մեքենային տրվում են այն բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են արտադրանքը թողարկելու համար: Բոլոր հնարավոր կոմբինացիաներից մեքենան ընտրում է ամենանպատակահարմար տարբերակը



և ժապավենի վրա գրառում ղեկավարման ծրագիրը: Նկարում ցույց է տրված տպարանի ենթադրական սխեման. ա-ղեկավարման ծրագրի ստացում, բ-ավտոմատ սրբագրություն, գ-հաշվիչ

և հսկիչ սարքեր, ղեկավարման պոլստ, դ-պատկերի փոխադրում (օպտիկական, էլեկտրամագնիսական կամ մագնիսական), ճ-ծալքի ու քաղի բաժանմունք, Վ-շրջանցիկ փոխակրիչներ, է-անկար ամրացման ավտոմատ, ը-ֆորպացի կպցնելը, թ-հեռուստատեսային կամերաներ, ժ-կոնակի կլորացում, ի-բլոկի կտրում, լ-կողեր (կալմ) պատրաստող մեքենա, խ-բլոկը նստեցնող և կտրվածքը գծող կոմբինացված մեքենա, ծ-բարձր հաճախականության մամիչ, կ-կալմի վրա պատկերի ստացումը էլեկտրոնային եղանակով, հ-կողեր պատրաստող տեղամաս, ծ-ավտոմատ փաթեթավորում և պատրաստի գրքի թողարկում:

Տեքստային ֆորմաները պետք է պատրաստվեն էլեկտրոնային լուսանկարչական շարվածքային մեքենայի վրա՝ ավտոմատ ընթերցումով և սրբագրական ուղղումով: Տպագրական պրոցեսը նպատակահարմար է կալմակերպել մագնիսային կամ կտրողաֆիական տեխնոլոգիայի հիման վրա, մամուլների ամբողջ կոմպլեկտի միաժամանակյա տպագրումով: Կալմարարական աշխատանքները պետք է կատարվեն միմյալին հոսքային մեթոդով, ըստ որում պետք է օգտագործվեն սինթետիկ սոսնձանյութեր, որոնք արագ չորանալով հնարավորություն կտան առանց սպասելու ձևավորել կոնակը: Գրքի բլոկի պատրաստմանը Վուգենթաց պետք է պատրաստվեն կալմի կողերը (առավելապես պլաստմասսայի ֆոլգայից): Պատրաստի բլոկները և կողերը (կալմերը) հանդիպում են նստեցնող-գծող ագրեգատում, որտեղ բլոկը բարձր հաճախականության սարքավորման միջոցով եռակցվում է կողերին: Ավտոմատը պետք է ունենա ֆոտոէլեկտրական հսկիչ սարքավորումներ, ինչպես նաև հեռուստատեսային կամերաներ, որոնք թույլ կտան մի կետից դիտելու գծի բոլոր տեղամասերի աշխատանքը: